


ԲԵԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուրկարիոյ համար
Տարեկան ֆրք 10
Վեցամսեայ " 5
ԿԱՆԻԻԿ

20
ՍԵՆԴԻՄ



ԲԵԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Արտասահման
Տարեկան ֆրք 12
Վեցամսեայ " 6
ԿԱՆԻԻԿ

20
ՍԵՆԴԻՄ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵՇՏԱԿԱՆ

Կը հրատարակուի Շաբաթ օրերը: Շա-
նուշուան տոյր 10 Սանդիլ: Եկու քիւ ա-
ռաջ հրատարակուած քերքը 40 Սանդիլ:
2 հրատարակուած գրութիւնը եւ յօդուիր:

Հասցե
DIRAN PAPA ZIAN
RUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARNA

ԶԵԿՈՅՑ

Թէ թերթիս արտօնատիրոջ և թէ
խմբագրու թեանս ուղղուած ո և է գը-
րութիւնը որ անատրագիր են, երբէք
նկատողութեան չեն առնուիր:

ԱԶԳԱՅԻՆ

Անցեալ շաբթու քաղաքիս թաղ. խոր-
հրդոյ մէկ քանի անդամները հրաժա-
րական կը մատուցանեն Աւագերէց Տ.
Մարտիրոս հօր. որն որ տեղւոյս մէկ
սովորութեանը համաձայն ժամկոչին
ձեռքով հրաւերի տետրակ մը պատցնել
տալով 68 աղգայիններու, զանոնք ընդհ-
ժողովի կը հաւիրէ, ընտրելոց ցանկ
մը պատրաստելու համար, բայց որոշ-
եալ օրը միայն մէկ քանի աղգայիններ
ներկայ գտնուելով, օրինական մեծա-
մասնութիւն չեն կազմեր. ուստի հարկ
կըլլայ Բ. անգամ, սեպ. 30 չորեքշաբ-
թի իրիկուան ժամը 8 1/2ին ընդհանուր
ժողով գումարել: Այս անգամ ալ ժամ-
կոչ աղբարը 68 աղգայիններու կը պը-
տըացանէ հրաւերի տետրակը, որոնցմէ
2ը կը ստորագրեն, 2ը « ներկայ » կը

գրեն, իսկ մնացած 40ը X բաշմա-
պատկեալի նշան մը կը գնեն. թերեւս
աղգային կնճռոտ խնդիրները աւելի
բարձրապատկեալ տեսնելու և կամ ա-
նուններուն անսխալ գրուած ըլլալը
հաստատելու միտքով:

Որոշեալ գիշերը այդ տետրակը
ստորագրողներէն 11 աղգայինք ներկայ
գտնուելով, դարձեալ մեծամասնութիւն
չի գոյանալուն՝ այս անգամ կ'որոշուի
հետեւեալ աղգը լրագրաց միջոցաւ հրա-
տարակել:

ԿՈՐԵԻՈՐ ԱԶ

Տեղւոյս Աղգային Թաղական խոր-
հրդոյ մեծամասնութիւնը հրաժարած
լինելով՝ աղգային այս անկերպարան վի-
ճակին վերջ մը տրուելու համար երկու
անգամ ընդհանուր ժողով հրաւիրուած
և մեծամասնութիւն չգոյանալուն պատ-
ճառաւ որոշուած է երրորդ անգամ լի-
նելով՝ ի նիստ հրաւիրել ընդհանուր
ժողովը՝ որ վերջնական կերպիւ տեղի
պիտի ունենայ ըստ օրինի առանց մե-
ծամասնութեան սպասելու ի 4 հոկտեմ-
բեր 1898 կիրակի օրն ի ժամ 10 ա-
ռաւօտեան ըստ երազական յետ աւագ-
տեան Ս Եկեղեցւոյ առաջին սեռի աղ-

գային վարժարանին մէջ բացակայե-
րաւունք չպիտի ունենան տրուելիք ո-
րոշմանց դէմ բողոքելու :

Ուստի կը հրաւիրուին ամեն ազ-
գայինք ներկայ գտնուիլ յիշեալ օրն ի
նիստ, իրենց ազգային պարտականու-
թիւնը կատարելու համար :

Վառնա, 1 Հոկտ.

98

Մնամ աղօթարար
Նախագահ Ընդհ. Ժողովոյ
Տ. ՄԱՐՏԻՐՈՍ ՔԱՀԱՆԱՅ
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Նորին Արքայական Բարձրութիւն
Պուլկարիոյ Ֆէրտինանտ իշխանը չորեք-
շաբթի օրը իրիկուան դէմ, հետիոտն
Վառնաի շուկան պտտեցաւ ու մէկ քա-
նի խանութներէ փոքրիկ գնումներ ը-
նելէ ետքը, իր ոսկերչապետ Տիար Յով-
սեփ Պարսամեանի վաճառատունը այ-
ցելեց, ուր տասը վայրկեանէն աւելի
մնաց. այցելեց նաև Տ. Նաուբան վաճա-
ռատունը և նրբագործ գանակներ շինող
Պ. Մարտիրոս Սերովբեանի խանութը :

«Հանդէս Ամսօրեայ» լիբրլին թը-
ւոյն մէջ ուրախութեամբ կը կարդանք
թէ Աւստրիոյ Ֆրանզ Եօզէֆ Կայսրը օ-
գոստոս 30ին Վիէննաի Միլիթարեանց
տպարանը այցելելու, Աբբահայր Գեր-
Արսէն Եպիսկոպոս Այտնեանի և տպա-
րանապետ Վ. Հ. Գրիգորիոս Վ. Գալէմ-
քեարեանի հետ տեսակցելու ու իր գո-
հունակութիւնը յայտնելու է ցուցահան-
դէս գրուած տպարանական առարկա-
նիւրու մասին :

Ինչպէ՞ս որ անցեալները ծանուցինք,
Վառնաի նորակազմ Ընթերցատիրաց
ընկերութիւնը Հոկտ. 1էն գործի ըս-
կած է : Եօթը անձերէ բաղկացեալ Գոր-
ծադիր Ժողովը բաժանորդներ գտնելու
վրայ է : Ի՞նչ ատենէն ալ թատերական
ներկայացում մը պիտի տրուի, բացուե-

լիք Ընթերցարանին նախնական ծախքը
հոգալու համար : Կը յուսանք թէ Վառ-
նաի Ընթերցասէր Հայ Ժողովուրդը սոյն
նորածիլ ընկերութիւնը պիտի քաջա-
լերէ, որ կաշխատի անոր պատիւ բե-
րող Ընթերցարան մը ունենալ :

Կրօն. Ժողովը Ռուսճուգի Արթ. Տէր
Կարապետ Աւագ քահանային յանձնա-
րարեր է որ Պուլկարիոյ Հայ եկեղեցի-
ները պաշտօնավարող քահանաներուն
մէկ ցուցակը պատրաստէ, յիշելով իւրա-
քանչիւրին ծառայութիւնը, արժանի-
քը և այլն :

Անշուշտ փոքրի ցաւ պիտի պատճա-
ռէ այս լուրը այն կարգ մը քահանա-
ներուն, որոնցմէ արժանիք փնտռելու
մասին Պատրիարքարանը շատ ուշ մը-
նացած է : Մեր գիտցածը, այդ ար-
ժանիքը ձեռնադրութեան ատեն փըն-
տռելու էր :

Ռուսճուգի ծանուցեալ Տ. Ղեւոնդ
քահանան, որ այժմ Սուչովա կը գլու-
նուի, առանց կարգաւորութիւնը ձգե-
լու երկրորդ անգամ ամուսնանալու հը-
րաման մը ձեռք բերելու համար տա-
կաւին իր թմբուկը զարնելով, ասդին
անդին ինկած ապարդիւն ջանքեր կընէ
եղեր : Յիշեալը վերջերս կեդրոնի Կրօ-
նական Ժողովին ալ դիմել է, բայց ըստ
օրինի մերժողական պատասխան առերէ :

Կիմանանք թէ մէկ քանի պարոն-
ներ Վառնաի վարժարանաց ընդհ. Տե-
սուչին ներկայանալով, Ազգային երկ-
ուեռ վարժարանաց կարգադրութեանցը
մասին աննպաստ տեղեկութիւններ հա-
ղորդած են : Պ. Տեսուչը, Հոգաբարձու-
թիւնը կանչելով, խնդիրը անոնց պար-

լած է, ու տրուած բացատրութենէն
զոհ մնալով, ցաւ յայտնած է այդ մէկ
քանի պարոններու կողմէ իրեն տրուած
սխալ տեղեկութեանց համար:

Արեւելեան տպարանի տէր Տ. Օն-
նիկ Բարսեղեան, որ ասկէ առաջ Վսու-
նաէն տարագրուած էր, ներման ար-
ժանանալով այս չորեքշաբթի օր վերա-
դարձաւ:

Տիկին Պայծառ Փասուլեանէն ի
նպաստ իւր հիւանդ ամուսնոյն, որ այժմ
Այտուի հիւանդանոցը պառկած է եղբի,
մօտերս ներկայացում մը պիտի տայ,
մասնակցութեամբ անձնուէր երիտա-
սարդներու. ներկայացուել ք խաչն է
ազգային գրագէտներէն Թ. Թէրզեանի
«Մանգուխտ կոյս» անուն ողբերգութիւ-
նը: Յուսալի է որ տեղւոյս թատերա-
սէր հայ հասարակութիւնը պիտի քա-
ջալերէ տիկին Պայծառի սոյն ձեռնարկը:

Այս գիշեր ժամը 8½ին Սայիտինէ-
նիէ սրահին մէջ տեղի պիտի ունենայ Նա-
թան պէյ Ամիրխանեանցի նուագահանդէսը:

ԱՍԻՍԸ 100ԻՆ 13 ՂԲԵ. 13 ՓՐՅ.
ԵՒ 1 ՍՏԱԿ ՏՈԿՈՍ

300 զրշի փոխատուութեան հա-
մար խեղճ կնոջ մը կարի մեքենան գը-
րաւի առնելէ ետքը՝ զայն ձրիաբար
գործածելը բաւական չի համարելով՝
ամիսը 40 դահեկան ալ տուիտ առնող
պէս նոր վաշխառու խանութպանին վեր-
ջնապէս կ'ազգարարուի որ, ա'լ ձեռքը
քիչ մը խղճին վրայդ նէ, (եթէ սակայն
ունի.) ապա թէ ոչ, հեռու չէ այն օրը,
որ օրէնքին երկաթէ ձեռքը պիտի ծան-
րանայ իր գլխուն ու սրտին վրայ:

Ա. Տ. Պ. Տ. Ժընէվ. — Դրամը զըր-
կեցէք որ գիրքերը յանձնենք թղթա-
տարին:

Ա. Պ. Գ. Խ. Բօսթ ուէսթանի Թուս-
ճուգ. — Յարգեցէք ձեր խոստումը և բո-
ժանորդագինը շրկեցէք, եթէ չէք ուզեր որ
գալ շարժու թերթին առարուժը դադրի:

ԵՐԿՈՒ ԿԱԹԻՆՆԵՐ

Աշնան օր մըն էր, յուշիկ ու հեղիկ
Դուրսը կ'անձրեւէր ու սուրսը հոյիկ,
Շաշին մէջ փաքքած, պատահալի մօտ՝
Կոյս մը դարկահար նստած էր մաղձոս:

Ի՞նչ կը մըսածէր առդեօք այն պահուն
Ինչո՞ւ տրիտար էր աղջիկն այն սիրուն
Կարծես նոյն էին իրեն մոտք եւ յոյս,
Կորած էր մի՞թէ իրեն բոյնը յոյս:


Միշտ կաթիլ կաթիլ դուրսը կ'անձրեւէր,
Վեր կ'առնէր նա մերթ իրեն սեւ աշեր,
Դիտէր հորիզոն, եւ յետոյ դարձեալ
Առաջնաւն նրան կը սկսէր խոկալ:

Սկսաւ կոխել մոտք կառնաց կառնաց
Ինչքո՞ւ տակաւին այնպէս տրիտարած
Կը նստէր այնտեղ, անշուշտ նա փախուկ
Սրտին խորշերում վերջ մ'առնէր ծածուկ:

Շաշին մէջ փաքքած սրժոցն երեսով,
Բըռնած էր ձակասն իրին ձախ ձեռքով
Կարծես երազէր այնպէս անուշիկ,
Ինչպէս որուն մէջ նրնջէ մանկիկ:

Միշտ յուշիկ յուշիկ դուրսը կ'անձրեւէր,
Իւր սրժոցն ձակասին երկու կաթիլներ
Կաթեցան մեղրիկի՜ որ հոյն երկրնէն
Իւր հետ քերել էր սեւ սեւ անկերէն:

Նա քաջաւ աշեր, քոխն, անծրափս
Դիտեց հորիզոն . . . իբրո՞ւ մարգարիտ
Երկու կաթիլներ աշերէն խոկոյն
Ինկան ցոյեղով աշերը սրժոցն:



Տ Ի Պ Ա Ր Ն Ե Ր

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆԸ

Գլուխը՝ հօ—սը—Փօռմ, բլին վրայ
ոսկեզօծ շրջանակներով ակնոց մը, եղանակին
նորածեղութեանը համեմատ շքեղապէս հագ-
ուած, պաշտօնական փողկապ, պաշտօնական
ձեռնոց, ձեռքը նուրբ գաւազան մը, զոր օ-
ղին մէջ մատներուն վրայ դարձնելով կը
յառաջանայ, ոտքերը կիսակօշիկներ՝ որոնք
անուարկելի են. կարելի չէ բիծ մը նըշ-
մարել հագուստներուն վրայ և ոչ իսկ ա-
մենափոքր թերութիւն մը արգելարդին մէջ:

Ինքը, Պ. Համալսարանականը ուսած է
բաղադրութեան բարձրագոյն հաստա-
տութեան մը մէջ իր նախասիրած մասնագի-
տութիւնը: Համեստ գիրքի տէր ծնողաց
զաւակ. կանուխէն թողած է իր հայրենի
բնագաւառը ու գացած ապրած է տարինե-
րով ընկերական ու քաղաքական բոլորովին
տարբեր հանգամանքներու տակ գտնուող
երկրի մը նուրբ բաղադրութեալ ժողովրդին
մէջտեղը:

Առանց ուսումնասիրելու ու ծանօնալու
նոր միջավայրն ու ընկերութիւնը, առաջին
տպաւորութեանց տակ հիասթափ և շլացած՝
կորսնցուցած է իր սեփական անկախ դա-
տումը, կորսնցուցած է ինքնութիւնը, կարճ
խօսինք, կորսնցուցած է ինչ որ կար աղնիւ
իր բարոյական—իմացական խմորին մէջ:
Կուպկած է ամեն բան, հապուստ, սովորու-
թիւն, խորհելու կերպ, կենցաղ և այլն:

Հիմա որ վերագործած է, հիմա որ
մագաղաք ունի, հիմա որ եւրոպականացած
է ու հաւաքականացած, ա՛լ իրենները շատ
գէշ կերեւան աչքին. ծնողքը արհամարհելի
կոշտ արարածներ են իր առջեւ. անոնք որ
ամեն զոհողութեամբ իր բարեկրթութեանը,
իր երջանկութեանը համար աշխատած են,
յաճախ նախատինքներու և ծանր յանդի-
մանութեանց առարկայ կըլլան ամէն օր:

Սկեպտական յաւակնոտութիւններով իր

մէջ պահած է գործունէութեան եռանդը:
Կեանքի կռիւէն վհատած՝ դասալիք կըլլայ
յաճախ աննշան դժուարութեանց առջեւ.
կամքի կենսականութիւնը կը պակսի իրեն.
Լսածով մ'է, արհամարհոտ ու հպարտ վեր-
ջապէս:

Ֆիզիքականը աւելի աննախանձելի վի-
ճակ մը ունի: Դէմքը զուրկ է ու եւ տը-
տայայտութենէ, աչքերը մոլորուն ու մտա-
կոտ, կարծես կը նուաղին, վաղահաս խոր-
շտմներ կ'ակոսեն նսեմ ճակատը. մարմինը՝
կրիտասարգական ամէն շուալտութիւններէ
մաշած ու կքած, կորսնցուցած է կորովը, կոր-
սնցուցած է առուգութիւնը: Ափսո՛ս, ահա
սխալ դաստիարակութեան ցաւալի հետեան
ըն: Խիստ քիչ քաջառութեամբ քանինե՛ր կան
արդեօք մեր շուրջը այս տիպարներէն:

Բարոյական. Այն ծնողք՝ որ իրենց
զաւակաց բարւօք դաստիարակութեանը ան-
փայլ գտնուելով, կ'ուզեն միայն շահով մար-
դամբեկներն պատրաստել, անոնցմէ դառն
յուսախաբութեամբ կը բաւեն յաճախ ի-
րենց սխալը:

Դպրոցը չէ՛ միայն որ կը շինէ մարդը:

ԱՐԱՄ

ԿՈՐՈՒՄԵՍԱԼ ԴԱԳԱՂԸ

Անցեալ շաբաթ օրը քաղաքիս Դրդ
Թաղի բնակիչներէն գաղթական ծերունի հոյ
կին մը կը մեռնի, որուն յուղարկաւորու-
թեան և թաղման պատրաստութիւնք կը ըս-
կըսին:

Ժամկոչ աղբարը, որ գերեզմանը պատ-
րաստել պիտի երթայ եղեր, իր մէկ սոռ-
րագասեալին կը հրամայէ եղեղեցիին դադա-
ղը Դ. Թաղ, այնինչ փողոցը ննջեցեալին
տունը տանիլ. այս հրամանին վրայ մարդը
դադաղը կը շարկէ ու ծամույ կեղնէ: Մէկ
ժամ վերջը քահանայն, լուսարարը և խա-
չաղիքը ննջեցեալին բնակարանը երթալով տան

կարգը կը կատարեն, ու երբ կը պատրաստուին տունէն մեկնել, կը նային որ դագաղ չի կայ. դագաղը շալկող մարդը տակաւին չէր եկած, զոր գտնելու համար ասդին մարդ կը հանեն, որոնք դէմերնին ելլողներուն կը սկսին հարցնել:

— Պագսանա՛, կօսթիւն, պիր ճաղ֊
փատ կէօրտիւն մի:

— Նէ՞ շէյ օ շաթ բաթ:

— Չաթ բաթ տէյիլ, ճաղ֊ փատ:

— Նիղնամ. էօյլէ ասամ թանճամ֊
յօրըմ:

— Պէ պագալնիցա, պուրատան պիր
էօյիւ սանտըղը կէօթիւրտիլէր մի:

— Տա՛, պիր աղ եվվէլ կէչիւրտիլէր:

— Նէ՞ թարաֆա կիթտի:

— Իպրահիմա՛ աղա գարուսունա սօշ֊
րու:

— Ա՛, նիշին էօյլէ, տէօրտիւնճի ու֊
չասթա կէթիւրէճէր իտի:

— Նէ՞ սէօյլէյօրսըն պէ՛, էօյիւյիւ Իպ֊
րահիմա՛ աղա գարուսուն եօլունտան մէզարա֊
կէօթիւրմէզլէր մի. սէն Վարնայա եէնի՞ մի
կէլտին:

— Ա՛ գուզում, պանա էօյիւ սօրմա֊
յօրըմ, սանտըգ սօրայօրըմ:

— Պէն պագալըմ պէ՛, սօղլումաճը
տէյիլըմ. կիթ օնա սօր:

— Քօքօնա՛, պուրատան պիր պօշ էօյիւ
սանտըղը կէօթիւրտիլէր մի:

— Գալէ քի՞մ էօլմիւշ:

— Ճանըմ, էօլէն մուհաճիր տիր. պիր
սանտըգ կէչիւրտիլէր մի պուրտան:

— Ուշագ մը ըմըշ եօփսա տէլիֆանլը:

— Պէ գուզում, պրագ օյրասընը, սօր֊
տուղումըն ճէվապընը վերսէ՛նէ:

— Գա՞ն եաշընտա ըմըշ:

— Պիլմէյօրըմ. էօյիւ պէրլէյօր:

— Պէքլէսին, գաշաճագ տէյիլ ա՛,
էվլի՞ մի իմիշ տէլիֆանլը մը:

— Պուլտուգ պէլայը. գապահաթ պէ֊
նիմ քի՛ սանա շէյ սօրտում:

— Նէ՞ հապէր պարոն Վահան, սան֊
տըղը պուլտունտըգ մու:

— Նէ՞րէտէ պուլաճաղըգ. գալտաշ֊
հօռում ժամընա կիթտիք պիր սաաթ. իչիւն
էօթիւնճ իսթէտիք իսէ՛ “իշէ կէօնտէրմիշիգ.
տահա կէթիւրմէտիլէր” տէյի ճէվապ վեր֊
տիլէր:

Վերջապէս, 3—4 ժամ փնտռուքէ
ետքը, իրիկուան ժամը 6ին, ուշ տուն հա֊
ղիւ կը գտնեն դագաղը շալկող ապուշը, որ
փոխանակ Գրգ թաղի, Բ. և Գ. թաղերու
բոլոր փողոցները 20—30 անգամներ գա֊
նալէ ետքը, ճարահատած՝ “հէլպէթտէ
պուրալարտա պիր էօյիւ գուհուր իտէճէք վէ
պէնի կէլիպ պուլաճագլար” ըսելով, անշուք
փողոցի մը մէջ դացեր նստեր է եղեր, որուն
պրտաճառաւ ննջեցեալին թաղումը յետաճըգ֊
ուեր է յաջորդ օրուն:

ՈՒՅՏՈՒՐՄԱՍԻՕՆ

ԵԱՆԿԼՈՅ ԱՏՐԵՍ

Մալիւմ տիր քի, բօսթայա պրագլա֊
ճագ մէթուպուն ատրէսինտէ տիգգաթսըգ֊
լըգլա պիր հարֆ ֆաղլա վէ եանօգսան եա֊
զըլըսա՛ պաղէն ուլկունսուզըգլարա սէպէ֊
պիյէթ վէրիլիր: Իշթէ պու գապիլտէն օ֊
լարագ կէչէն հաֆթա կապրօփատա պիր
մատմազէլ թարաֆընտան քէնտիսէվկիւլիսի
միւսիւ Մէջիգօֆ նամ զաթա կէօնտէրիլէճէք
աշըգտաշըգ մէթուպունն ատրէսի՛ սէհվէն
Մէլիշիքօֆ իսմինէ եաղըտըղընտան, մէք֊
թուպլարը թէվլի իտէն մէմուր՝ մէզքիւր
մէթուպու Մէլիշիքօֆ իսմինտէ պիր Մակէ֊
դոնեալը թէվկեահատարա կէօթիւրիւր թէու

լիմ իտեր : Շախսը մերգում տախի, ասեթ-
տէն օլտուղու իւգրէ, հէման զարֆը աշա-
րագ, տէրունինտէն աթիտէրի մէալտէ էր-
մէնիճէ եազըյլա լիսանը թիւրքճէ օլարագ
պիր մէթուպ պուլուպ, թանըտըգ պիր էր-
մէնիյէ միւրաճաթլէ օգուլթուրուր :

Իշիտիլտիղինէ կէօրէ, մէթուպուն մէա-
լի չէօյլէ իմիշ :

Սեկիւլիմ Միւսիւ Զ. Մէջիգօֆ :

Պիր գապահաթլա աստմը ասմաղլար :
Սէնի նէ՝ տէրէճէ սէվմէթտէ օլտուղումու
գօնու գօնու պիլէ թաստիք իտէպիլիւր : Գըլ-
գարտաշըմ ճաշիլիքլէ սէնին ալէյհինտէն
«Իսմի կիպի ճէպի տէ մէջիգօֆ օլմալը բի՝
պիր գուլթուր րօգ քուտրասր ալամայօր տէ-
տիղի իշին պանա տառըլմըշսն. պէնիմ
պուրտա գապահաթլմ նէ՝ տիր օնդուն աղ-
զընա պիր բիլիթ թագապիլիւրմի իտիմ : Ալֆ
էյլէ սուշունու, պիր շէյ տիր օլմուշ : Ա՛հ
սէվիլիլիմ, պու սէրէնճամլարն սօնու նէ՝
օլաճագ. «սէնի սէվէրիմ» տէտիքլէշին ա-
ճապա ծիտտի՝ մի տիր, եօգսա՝ պիր մաքինա
մը իտէյօրսուն : Իշթէ պու մէթուպուլա
սանա սէօզ վէրիյօրմ բի, արթըգ պունտան
սօնրա սէնտէն պաշգա պիր բիմսէ իլէ կէօ-
րիւշմէյէճէիմ : Պու իշլէրէ պիր նէթիճէ վէր-
մէք իշին եարըն ագշամ Պէլէտիյէ պաղչէ-
սինտէ սաաթ 6¹/₂ տա սէնի կէօրմէլիլիմ. է-
կէր կէլմէզ իսէն, էօլտիւղիմ կիւն տիր,
պիլմիշ օլասըն :

Իմգա

Ունուլթմա պէնի,

Պէլէրիմ սէնի :

Թէգկեահտար՝ իշպու մէթուպուն միւն-
տէրիճաթլնա ալեհաճ օլտուգտա, «Գըսմէթ
այաղըմըգա կէլմիշ» տէյէրէք, իրթէսի ագ-
շամը պաղչէէ կիտիպ մատմաղէլէ պէլէմէք
թասապիլուրընտա պուլունուր իսէ տէ, մու-
ախէրէն ասրէստէ պիր սէհվ օլտուղունա
գանաաթ հասըլիտէրէք, թէշէպպիւսիւնտէն
ֆէրաղաթ կէլմիշ տիր :

Մատմաղէլ իսէ, միւսիւ Զ. Մէջիգօֆու
կէօրմէք իմիւտի իլէ ռաւնէյնու ագշամը՝
շիւպհէսիղ պիր գաշ սաաթլար պաղչէնին
էնիսի պօյունու էօլշմիւշ օլմալը տըր : 8.

ՎԱՐՊԵՏՈՐԴԻ ԼՐԱԳՐԱՊԵՏ ՄԸ

Գաղիոյ գաւառական թերթերէն մէկուն
մէջ հետեւեալ ազգը կը կարգացուի :

Ա. Զ. Դ.

«Անցեալ օր գինետունէ մը երեք շիշ
գինի առինք, որք խարդախեալ և աւրուած
են եղեր. առ այժմ չուզելով վաճառողին ա-
նունն յիշել, ներկայիւս կիմացնենք որ՝ եթէ
այն գինիներուն տեղ հրեք շիշ Պօրտոյի ըն-
տիր գինի չի զրկուի մեզի՝ գինետան թիւը և
գինեպանին անունը յաջորդ թերթով պիտի
հրատարակենք : »

Այս ազդարարութեան վրայ գաւառին
մէջ գտնուած բոլոր գինեպանք իրար անցած
կաճապարեն Յաննի շիշ Պօրտոյի ընտիր գի-
նի զրկել մեր վարպետորդի լրագրապետին, որ
անկուտիաբար կը վայելէ, և ասով կը հաս-
տատուի թէ նոյն գաւառին բոլոր գինետուն-
ներուն ծախած գինիները կեղծ և խար-
դախեալ են եղեր :



ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԷՋ

Մանկավարժը. — Սիրելի մանուկ-
ներս, հիմա ձեզի բան մը պիտի հար-
ցնեմ. տուն մը կայ, որուն գուռը հա-

բուստին ու աղքատին, արանց և կանանց, ծերոց և տղայոց և ամէն չափու հասակի մարդոց համար միշտ բաց է, (եկեղեցին կակնարկէ) ու ես կը փափագիմ որ դուք յաճախ այցելէք այն տունը, ուր մտնողը կը մխիթարուի և գոհ սրտով կը մեկնի. օ՛հ ուրեմն ըսէք տեսնեմ, այդ տունին անունը ի՞նչ է.

Կոչկակարի մը տղայ — Դինետուն:

Պզտիկ աղջիկներու դասարանի մը մէջ

Վարժապետը. — Տեսնե՞նք թէ սա հարցումին վրայ ձեր կարծիքը ի՞նչ է. «Երբ կենդանիները ճապարկը կը մըտնէին, Եոյ նահապետ ի՞նչ կընէր».

Պզտիկ աղջիկ մը. — Մուտքին տոմսակները կը հաւաքէր:

Հայրը. — Արմենակ, ձեր դասարանին մէջ ամենէն ծոյլ տղան ո՞վ է.

— Չեմ գիտեր հայրիկ.

— Կարծեմ գիտնալու ես, երբ ուրիշները իրենց դասերը կը սորվին կամ կը գրեն, այն ատեն ո՞վ է որ փոխանակ աշխատելու ծուլօրէն միւսները կը դիտէ.

— Վարժապետը:

Կենդանաբանութեան դասատուն.

— Պարոններ, հիմա, որ ակաւայունեցող կենդանիները սովորեցանք, կարգը եկաւ ակաւայ չունեցողները ճանչնալ, արդեօք կը գտնուի՞ ձեր մէջէն մէկը, որ ակաւայ չունեցող կենդանիի մը անունը տայ.


Կայտառ աշակերտ մը—Ես կրնամ տալ.

— Ըսէ տեսնե՞նք, այդ կենդանիին անունը.

— Ահա մամիկս, Թաթիպչէ խաթունը... բերնին մէջ ակաւայ մը չունի:

Ուսուցիչ մը իւր աշակերտացը տուիք կնճռոտ մէկ դասը երկար բարակ բացատրելէն ետքը, (մինչդեռ անոնք ալ ձանձրացած սկսեր էին մրաբել) — Պարոններ, ըսաւ, հիմա այս խնդրոյն վրայ խելքերնիդ պառկեցաւ, այնպէս չէ՞.

— Միւսիւ, իմ խելքս՝ պառկելէն զատ քնանալ խել սկսած է, պատուախանեց փոքրիկ՝ այլ ուշիմ աշակերտ մը:



ՕԳՏԱԿԱՐ ԽՐԱՏՆԵՐ

Կարթով (օլթա) ձկնորսութեան դիւրին միջոց մը:

Հողանտացի ձկնորսները պարզ և ճշմարտապէս հետաքրքրաշարժ կերի (եհմ) մը միջոցաւ դարձանալի առատութեամբ ձուկ կ'որսան եղեր: Ահա թէ ի՞նչպէս: Փայլուն ապակիէ շիշ մը ջրով կը լեցնեն և անոր մէջ կը դնեն որդեր ու միջատներ, ու յետոյ բերանը լաւ մը կը դոցեն: Այս շիշը՝ որուն ծայրը չուան մը կապուած է, ջուրը կը նետեն այն տեղը՝ ուր պիտի երկնցնեն իրենց կարթը: Երբ շիշը ծովուն տակը կը հանգչի, հոսանքէն կը տատանի և իր շողունը (փայլը) իրեն կը բաշէ ձկանց փտառներ (սիւրիւ, ֆիւմէ) որոնք անյագաբար կը դառնան անոր բոլորաբեր: Շիշին մէջ բանտարկուած՝ լայց խաղացող որդերը ու միջատները այն աստիճան կը գրգռեն ձուկերուն ցանկութիւնը՝ որոնք լարուած կարթը կը խածնեն՝ իրարու ձեռքէ խլելով:

Ձկնորսութեան սիրահարները կրնան օգտուիլ այս պարզ հնարքէն:

ՄԵԾ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ



ՍՕՖԻԱ ՔԱՂԱՔԻ

ԳՈՒՆԱՐ ԿԵՌԱՎԱՐՈՒԹԵՆԷՆ

ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ

Ա. ՊԱՐԳԵԻՆ Է 500.000 ՖՐ. ՈՍԿԻ

50,000 տոմսեր հրապարակ հանուած են, որոնց 25,000ը պիտի շահին հետեւեալ կարգու.

1898 Դեկտ. 10ին 1500 թիւեր

1899 Յնվր. 7ին 1500 "

" Փետր. 4ին 2000 "

" " 26ին " "

" Մարտ 19ին " "

" Ապր. 12ին 16000 "

Մէկ ութերորդ տոմսակին գինն է Ոսկի Լէվ. Սթ.

Ա. ամսոյ համար 1 25

Բ. " " 1 75

Գ. " " 2 87 $\frac{1}{2}$ Դ. " " 3 62 $\frac{1}{2}$ Ե. " " 2 87 $\frac{1}{2}$ Զ. " " 2 21 $\frac{1}{2}$

14 40

Ասոնցմէ զատ կը գտնուին նաև քաւորդ, կէս և ամբողջ տոմսեր, որոնց արժէքները համեմատաբար կաւելնան.

Գնելու և մանրամասն տեղեկութեանց համար պէտք է գիմել սեզանաւոր Տ. Սարգիս Գարրիէլեանի, Վառնա, Մուսալլա:

ԱՄԻՐԻԱՆԵԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆ

ՎԱՌՆԱ

Կընդունին թոշակաւոր աղջիկներ և փոքր մանչեր, որոնք Օր. Լ. Ա. միբլանեսեանցի վարչութեան ներքե կուսանին հայերէն, եւրոպական լեզուներ և գաշնակ:

Տ Գ Ա Ր Ա Ն

ՀԱՅԵՆԻ

ՀԱՆԳԷՍԻ

Ամէն լեզուէ հրատարակութիւնք: Այցնտոմս, հասցէտոմս, նամակաշուք, հրաւիրատոմս, բարենիշ, տոմսակ հալլն հալլն թէ՛ պարզ և թէ՛ ոսկեզօծեալ մէկ քանի գոյներով կը տըպագրուին: Գնացքներէ եկած յանձնարարութիւնք փութով կը կատարուին. Գին դահացութիւն: Գիմել Հայելիի խմբագրութեան:



ԳՈՒՀԱԿ

Ա. ՊԱՐ. Ս. ՅԻ

Կամ Զուարճալի Բաղդադցոյ ընտանեկան

Երկսեռ ամէն հասակի ընթերցողաց ըզբօնալի ժամանցներ տուող սոյն գիրքը կը ծախուի մեկ ֆրանքի, թղթատարի ծախքով, գիմել խմբագրութեան:



ԲԳՍԱՆ, ԹԱՏԵՐԱՆԱՆ

Բովանդակութիւն թատերական երգերու և պարերու. նաև վ. ճակ ընկերական: Գին մէկ ֆրանք:

«Հայելի»ի Ա. տարւոյ թիւերը կաղմեալ կը վաճառին գին տասը ֆր. թղթատարի ծախքը մեր վրայ:

ОТГОВОРНЫѢ М. СКОНОВЪ
Печантца «Взаимность» — Варна.